ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

«ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի պահանջներով,

հաշվի առնելով «անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծով կանոնակարգվող հարաբերությունների և դրանց առանձնահատկությունների կարևորությունը,

ի գիտություն ընդունելով ստորև նշված անձանց համաձայնությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու փաթեթի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու նպատակով ձևավորել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝
   1) Արմեն Լևոնի Ասատրյան (փաստաբան, աշխատանքային խմբի ղեկավար, արտոնագիր N 1374).
   2) Հարութ Սերժիկի Ակլունց (փաստաբան, արտոնագիր N 2468).
   3) Միքայել Արիստակեսի Դանիելյան (փաստաբան, արտոնագիր N 2866).
   4) Արմեն Զոհրաբի Թևանյան (փաստաբան, արտոնագիր N 2869).
2. Աշխատանքային խմբին առաջարկել ուսումնասիրել «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու փաթեթը և ներկայացնել առաջարկություն:
3. Սույն որոշման մասին իրազեկել աշխատանքային խմբի անդամներին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

25 հոկտեմբերի 2021թ.
թիվ 252-Ա
ք. Երևան